ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 535-Ա	*Տեսակը*	Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Հրապարակվել է միասնական կայքում	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ընդունման ամսաթիվը*	24.05.2021
Ստորագրող մարմինը	Վարչապետի պաշտոնակատար	*Ստորագրման ամսաթիվը*	24.05.2021
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	25.05.2021	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 20-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 535-Ա

ՏԱՐԵՑՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 20-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 16-րդ մասով և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը՝

1. Ստեղծել տարեցների հիմնախնդիրներով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողով (այսուհետ՝ միջգերատեսչական հանձնաժողով):

2. Հաստատել՝

1) միջգերատեսչական հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) միջգերատեսչական հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սահմանել, որ՝

1) միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքային գործունեության կազմակերպական-տեխնիկական ապահովումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը.

2) միջգերատեսչական հանձնաժողովը տարվա ընթացքում իր կատարած աշխատանքների վերաբերյալ տեղեկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ յուրաքանչյուր տարվա ավարտից հետո մինչև հաջորդ տարվա փետրվարի 20-ը:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013 թվականի հունվարի 17-ի «Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի աշխատակարգը և անհատական կազմը հաստատելու մասին» N 20-Ա որոշումը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետի պաշտոնակատար **Ն. Փաշինյան**

Երևան

24.05.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 1
ՀՀ վարչապետի
N 535-Ա որոշման

Կ Ա Զ Մ

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
(վերնագիրը խմբ. 20.01.23 N 54-Ա)

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալ - հանձնաժողովի նախագահ

ՀՀ առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության պետ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային կառավարման վարչության պետ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության պետ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետի տեղակալ

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետ (համաձայնությամբ)

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «Բնակչություն և զարգացում» ծրագրի ղեկավար (համաձայնությամբ)

Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիայի նախագահ (համաձայնությամբ)

Հայկական Կարմիր խաչի ընկերության սոցիալ-առողջապահական բաժնի պետ (համաձայնությամբ)

«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի նախագահի տեղակալ (համաձայնությամբ)

«Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի շահերի պաշտպան (համաձայնությամբ)

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար):
(հավելվածը խմբ. 20.01.23 N 54-Ա)

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար

Ա. Թորոսյան

24.05.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 535-Ա որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Տարեցների հիմնախնդիրներով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) խորհրդակցական մարմին է, որի ստեղծման նպատակն է աջակցել տարեցների կյանքի որակի բարձրացմանը և նրանց համար արժանապատիվ կենսապայմաններ ապահովելուն ուղղված գործողությունների իրականացմանը:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝

1) տարեցներին մատուցվող առողջապահական և սոցիալական ծառայությունների որակի բարելավմանը, համայնքահեն ծառայությունների ներդրմանն ու զարգացմանը, ինչպես նաև նոր ծրագրերի իրականացմանն աջակցելը.

2) համայնքում՝ տարեցների ներառման, հասարակական կյանքի բոլոր բնագավառներում նրանց մասնակցայնության խթանմանը և հասարակության մեջ նրանց դերի ու վաստակի գնահատմանն ուղղված աշխատանքների իրականացմանն աջակցելը.

3) ցկյանս կրթության, զբաղվածության, մշակութային կյանքին մասնակցության ապահովման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին աջակցելը.

4) տարեցների իրավունքների և շահերի պաշտպանությանը նպաստելը.

5) տարեցների շրջանում սեփական իրավունքների մասին իրազեկության բարձրացմանը նպաստելը:

4. Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակում և վերը նշված խնդիրների լուծման նպատակով՝

1) առաջարկություններ է ներկայացնում համապատասխան պետական լիազոր մարմիններին և տեղական ինքնակառավարման մարմիններին տարեցներին առնչվող ցանկացած հարց քննարկելու և լուծում տալու համար.

2) քննարկում է տարեցներին առնչվող՝ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում առկա խնդիրները ու ներկայացնում դրանց լուծման վերաբերյալ առաջարկություններ.

3) քննարկում է ոլորտի խնդիրները կանոնակարգող օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու կամ նոր իրավական ակտերի նախագծեր մշակելու վերաբերյալ հարցեր, արդեն մշակված և շրջանառության մեջ գտնվող իրավական ակտերի նախագծեր և դրանց վերաբերյալ ներկայացնում առաջարկություններ.

4) իրականացնում է օրենքով, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Հանձնաժողովի կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ սոցիալական պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի ղեկավարի

ներկայացմամբ:

6. Հանձնաժողովը կազմված է հանձնաժողովի նախագահից, անդամներից և քարտուղարից:

7. Հանձնաժողովի անդամների թվի առնվազն 50%-ը հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ են:

8. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է հասարակական հիմունքներով:

9. Հանձնաժողովի որոշումներն ունեն երաշխավորական բնույթ:

10. Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով:

11. Հանձնաժողովի նիստերը գումարվում են տարին առնվազն 3 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության՝ հանձնաժողովի նախագահի կամ անդամների 1/3-ի նախաձեռնությամբ: Հանձնաժողովի նիստերը կարող են անցկացվել նաև հեռավար, ինչպես նաև էլեկտրոնային հարցման եղանակով:

12. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

13. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում, նախագահի հանձնարարությամբ, հանձնաժողովի անդամներից որևէ մեկը: Հանձնաժողովի նիստի օրակարգն ու քննարկվելիք հարցերին վերաբերող անհրաժեշտ նյութերը հանձնաժողովի անդամներին են ուղարկվում նիստն սկսվելուց 7 օր առաջ:

14. Հանձնաժողովն ընդունում է որոշում՝ հանձնաժողովի նիստի քննարկմանը ներկայացվող նյութերի հիման վրա: Հանձնաժողովի ընդունած որոշումների մասին կազմվում է արձանագրություն:

15. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

16. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը: Հանձնաժողովի որոշմանը դեմ քվեարկած հանձնաժողովի անդամների հատուկ գրավոր կարծիքները կցվում են արձանագրությանը:

17. Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

18. Նիստի արձանագրությունը հանձնաժողովի անդամներին է ուղարկվում նիստից ոչ ուշ, քան մեկ շաբաթվա ընթացքում:

19. Հանձնաժողովի անդամների առաջարկությամբ և նախագահի հրավերով նիստին կարող են մասնակցել հանձնաժողովի անդամ չհանդիսացող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

20. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի գործունեությունը.

2) նշանակում է հանձնաժողովի նիստի անցկացման օրը, վայրը և հաստատում նիստի օրակարգը.

3) հրավիրում է հանձնաժողովի նիստերը.

4) ստորագրում է հանձնաժողովի ընդունած որոշումները և արձանագրությունները, հանձնաժողովի գործունեության հետ կապված գրությունները.

5) ներկայացնում է հանձնաժողովն այլ մարմինների և անձանց հետ հարաբերություններում.

6) իրականացնում է սույն աշխատակարգից բխող այլ լիազորություններ:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

21. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ապահովում է հանձնաժողովի աշխատանքների, նիստերի, օրակարգերի, անհրաժեշտ նյութերի, ինչպես նաև որոշումների նախագծերի նախապատրաստումը և դրանք տրամադրում է հանձնաժողովի անդամներին.

2) հանձնաժողովի անդամներին իրազեկում է հանձնաժողովի նիստերի օրվա, տեղի և ժամի մասին.

3) կազմում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, ստորագրում հանձնաժողովի որոշումներն ու արձանագրությունները.

4) նիստերի որոշումները և արձանագրությունները մեկշաբաթյա ժամկետում ուղարկում է հանձնաժողովի անդամներին:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

22. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի աշխատանքներին.

2) հարցեր և առաջարկություններ է ներկայացնում հանձնաժողովի քննարկմանը, անհրաժեշտության դեպքում՝ առաջարկում է հանձնաժողովի արտահերթ նիստ հրավիրել.

3) առաջարկություններ է ներկայացնում հանձնաժողովի գործունեության և նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

4) հանձնաժողովի ընդունած որոշմանը համաձայն չլինելու դեպքում՝ ներկայացնում է հատուկ գրավոր կարծիք.

5) ծանոթանում է հանձնաժողովի նիստերի արձանագրություններին.

6) կատարում է հանձնաժողովի որոշմամբ տրված հանձնարարականները:

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար

Ա. Թորոսյան

24.05.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ